ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍՈ ՀԱՅ ԴԱՂՈՒԹԸ

Ադրիանապոլիս կամ նոր ժամանակներուն Էտիրնե արևելյան Թրակիո գլխավոր քաղաքն է, ուր մինչև 1922 թ. ապրած է զգալի հայ ազգաբնակչություն մը։

Այս քաղաքը ժամանակին եղած է Թրակիացի ցեղի մը Պեսրու մայրաքաղաքը Յուսկյուտամ անունով։ Հռովմեական կայսր Ադրիանոս զայն վերաշինելով տված է իր անունը անոր։

Իր դիրքին բերումով Ադրիանապոլիսը բազմաթիվ կարևոր քաղաքական դեպքերու ասպարեզ եղած է։ Այս քաղաքի շուրջ տեղի ունեցած են մեծ ճակատամարտեր և մի քանի պետություններ զանազան ժամանակներու տեր դարձած են անոր, հասնելով մինչև մեր օրերը, երբ ան կրկին Թրքական Հանրապետության մաս կազմե, գտնվելով այս երկրի հյուսիս-արևմըտյան սահմաններու մոտ։

Ադրիանապոլսո մեջ հայկական գաղութի մը ներկայությունը կրնանք բաժնել երկու գլխավոր շրջաններու. ա) բյուզանդական և բ) օսմանյան։

Տեղին է հիշել նաև զանազան ժամանակներու մեջ տիրապետությունը ավարներու, խաշակիրներու, բուլղարներու, ռուսներու և հույներու։

Առաջին անգամ հայոց ներկայության մասին խոսք կըլլա բյուզանդական շրջանին։

Ավարայրի պատերազմեն հետո, երբ դրությունը պատմական Հայաստանին մեջ անտանելի կդառնա, երկու հայ իշխաններ՝ Արտավան ու Գաղրիկ իրենց ընտանիքներով և հետևորդներով 460 թվականներուն կփախին և ապաստան կըգտնեն Բյուզանդիա։ Լեոն I կայսրը անոնց թույլ կուտա բնակություն հաստատեն Մակեդոնիո Նիկիա (այժմ Նիշ, Հարավսլավիա) քաղաքը։ Հետագայում հայ Արշակունիներու այս սերունդը կփոխադրվի Փիլիպոպոլիս (այժմ Փլովտիվ). իսկ անկե հետո Ադրիանապոլիս[1]։ Մակեդոնիո մեջ և հետո Թրակիա հաստատված այս Արշակունիներեն կսերի Նաև Վասիլ I ապագա կայսրը, որը ծնած է Ադրիանապոլսո մեջ և որը հանդիսացած է Մակեդոնական (հայկական) կայսերական տոհմի հիմնադիրը[2]։

Հաջորդող դարերուն զանազան ժամանակներուն կրկին հայեր բռնի կամ կամով գաղթած և հաստատված են հոս։ Մասնավորաբար հիշատակության արժանի են հայկական զինվորական խմբավորումները, որոնք ստեղծած են գաղթօճախներ և բյուզանդացիները ջանք չեն խնայած, հայ գաղթականություններ հոս բերելով ռազմական խոշոր կեդրոններ ստեղծելու ուղղությամբ։ Բուլղար պատմագետ պրոֆ. Գ. Իրեջեկ կհիշե թե վեցերորդ դարուն Ադրիանապոլսո մոտակա Փիլիպոպոլսի բյուզանդական զորամասերու զգալի մասը հայերե բաղկացած էր[3]։ Անկասկած Ադրիանապոլսո հայ գաղթականությանց մաս կազմած են նաև պատմական Հայաստանի մեջ տեղ գտած ազանդավորական շարժումներու հետևորդներ պավլիկյան, թոնտրակեցի և մանիքեական գաղթականներ։ Թե որքան բազմաթիվ հայեր ապրած են Ադրիանապոլսո մեջ, կխոսի այն փաստը, թե ֆրանսացի գիտնական Միլլեի համաձայն 1261 թ., երբ խաչակիրները Բյուզանդիոնեն ետ կվերադառնային Հենրիկոս թագավորի առաջնորդությամբ, այստեղեն անոնց միացած են 20 հազար հայեր, որոնք կուզեին արևմուտք երթալ։

Հաջորդ դարերուն Ադրիանապոլսո հայերու ճակատագիրը այլ եղած է, որովհետև XII դարեն սկսյալ տեղի կունենա հայ ազգաբնակչության ասիմիլացիան։ Հոն հաստատված հայերը զանգվածաբար հունագավանությունը կընդունին, կըփոխեն իրենց լեզուն։

Թողնելով պատմագետներու հետևիլ դարերու մշուշին մեջեն հին Ադրիանապոլսո հայ ազգաբնակչության մասին ավելի մանրամասնություններ երևան բերել, հոս կուզենք քանի մը խոս-

---

1 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. Ա, Երևան, 1964, էջ 36։

2 Բյուզանդական աղբյուրներ Բ. Կոստանդին Միրանածին. թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 33։

3 «Փարոս» (շաբաթաթերթ). 1929, Փլովտիվ, թիվ 21։

քեր ընել այն շրջանի համար, երբ քաղաքը գրավեցավ օսմանացիներէ 1363 թ. անկէ հետու։

Ադրիանապոլսո հայ ծերերը պատմած են, թէ դարուի օսմանյան շրջանի առաջին հայ բնակիչները կրլլան քաղաքի հռչակավոր սուլթան Սելիմ մզկիթի շինության համար հոս բերված 250 հայ վարպետներ իրենց ընտանիքներով, 1560-ին։ Նույնպես ըստ ավանդության այս մզկիթի կառուցանողը եղած է նշանավոր վարպետ Ճարտարապետ Սինանը, Գոճա գալֆա։ Ծագումով հայ ու կեսարացի այս վարպետը Անատոլուէն բերված հայ վարպետներ գործածած ըլլալը իր գործին մէջ շատ ճշմարտանման է։ Բայց հայերը հոս եկած ու նոր գաղութ կազմած են ավելի վերջը, XVII դարուն առաջին տասնամյակին, 1605—1610 թթ. ու այս եղած է այլապես տխուր դեպքերու բերումով, որը մեր պատմության մէջ ծանոթ է Ջալալիներու ապստամբություններ անվան տակ, որի մասին կխոսի Գրիգոր Դարանաղցին[4]։ Հայերը անկարող հանդուրժել ապստամբության շուրջ բռնությունները և տեսնելով սահմանակից շրջաններու ամայացումը, ճարահատ 1605 թ. գաղթի ճամփան կրոնեն, ապահովություն փնտրելով Թրակիո օսմանյան նահանգին մէջ և անոնցմէ մաս մը, մոտ 200 ընտանիքներ, կուգան և հաստատվին Ադրիանապոլիս։ Այս հայերը քիչ ատենվա մէջ քարեկեցիկ դիրք մը կգրավեն և նույնիսկ աղթատեղի մը կշինեն։ Նույն թվականներուն քաղաքին կանցնի ճանապարհորդ Սիմիոն դպիր Լեհացին, որը իր ուղեգրության մէջ կհիշատակե. «Եւ կայր քաղքին մէջն քարէ եկեղեցի մի Հայոց, վեց երեց, երկու հաբեղայ, մին եպիսկոպոս եւ երկու, երեք հարիւր տուն հայի. բայց տեղացիք յոյժ սակաւք»[5]։

Շուրջ 25 տարիներ հետո կրկին հրովարտակ մը 20 օրվա պայմանաժամով կպարտադրե բոլոր նորեկները իրենց ծննդավայրը վերադառնան։ Հրամանեն չեն կրնար ճողոպրիլ Ադրիանապոլսո նոր հայ բնակիչները և քաղաքի մէջ կմնան միայն շորս տնվոր ընիկներ ու եկեղեցիի երկու քահանաները։ Այս դեպքի մասին կրկին կնկարագրե Դարանաղցին։

Մինչև 1673 թ. քաղաքի հայ գաղութը կյանքի նշաններ չի տար, կամ մենք չենք անոր փաստի մը հանդիպած։ Հավանական է օրվա վեհապետ սուլթան Մուրատի մահէ հետո, երբ կհաջորդե Իպրահիմը, արտաքսված հայերե ոմանք խմբովին կամ մաս առ մաս կվերադառնան իրենց տեղերը, այնպես որ երբ Մաթեոս Ղրիմեցին կանցնի քաղաքեն 1673-ին, հոն կրտեսնե բավական թիվով հայեր և եկեղեցի մը քահանաներով։

Այս առաջնորդի օրովը, այսինքն 1673 թվականներուն, սուլթան Մեհմետ IV կգրավե Կամենեց-Փոդոլսք շրջանը (այժմ Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունն) ու տեղվույն հայերը հարկադրված թողելով իրենց ծննդավայրը. հալածանքներու պատճառավ, Ադրիանապոլիսը կընտրեն իրենց նոր բնակավայր, «իսկ ոմանք երեւելիք ի հայոց խորհրդեամբ ի միջի իւրեանց շոքան ընդ բանակին (Անդրիանապոլիս», մինչ մնացյալ ժողովուրդը սուլթանի հրամանով կհեռացվի ու Սև ծովի վրա թափառելե հետո կուգա կհաստատվի Փիլիպոպոլիս, ուր 1675 թ. կհիմնեն հայ նոր գաղութը։ Այս պատմությունը գրի առնված է Ադրիանապոլսո առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի կողմե ու ձեռագիրը կգտնվի Երևանի Մատենադարանին մեջ ու կկրե «Վիպասանութիւն առման ս. Գէորգ եկեղեցւոյ Փ. Պոլսոյ» վերնագիրը։ Այստեղ Փլովտիվի եկեղեցվո գանձարանին մեջ կմնա ձեռագրի ֆոթոպատճեն։

Հայ գաղթականությունը եկած է գլխավորաբար Թոգատեն (Եվդոկիա), Ակընեն, Բինկյանեն, Մանճիսունեն, Արաբկիրեն և այլն։ Այս հաստատված է Ադրիանապոլսո առաջնորդարանի մեջ հրաշքով անցյալեն անեղծ մնացած տոմարե մը, որ պաշտոնական արձանագրությանց ծառայած է 1755-ենմինչև 1795, ուր քաղաքի Ս. Թորոս եկեղեցվո վերաշինության առիթով կատարված հանգանակութենե մը մանրամասն ցանկերե հայտնի կըլլա նվիրատուներուն անունները. արհեստները և իրենց ծննդավայրը։ Ցավալի է ըսել, թե հիշյալ ցանկերը և տոմարը 1922 թ. արտագաղթի շրջանին կանհետանան։ Հոս կրնանք ամբողջացնել հիշելով, թե XVIII դարուն վերջերը հոս եկած են նաև Ռումանիո Սուչավա քաղաքեն բավական հայեր։

Ադրիանապոլսո հայ ազգաբնակչության թիվը շատ զանազանություններով ներկայացված է, մասնավորաբար օտար աղբյուրներու մոտ, և ատոր համար մենք զանոնք գանց կառնենք և մոտավորապես ամենահավանականը կնկատենք հետևյալ թվանշանները. 800 ընտանիք «Հուրիեթեն» վերջ, 650 ընտանիք Բալղանյան պատերազմի շրջանին և մոտավորապես 400 ընտանիք հայություն ընդհանուր առաջին պա-

---

4 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան. Երուսաղեմ, 1915։

5 Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք. ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան Մխիթարեան ուխտէն. Վիեննա, 1936, էջ 45։

տերազմե հետո, երբ հոկտեմբեր ամսուն ադրիանապոլսեցի հայը պիտի լքեր իր ծննդավայրը և անցներ հյուրընկալ եղբայրական բուլղար հողի վրա և մաս մըն ալ Հունաստան։

1605 թ. ստեղծված հայկական գաղութի առաջին բնակավայրը եղած է «Քըյք» թաղը, ուր հայերը շինած են իրենց մատուռը Արբա Քերվան կոչված տեղը։ Նույնպես այստեղ եղած է իրենց առաջին գերեզմանատունը։

Հայոց բնակած երկրորդ թաղը կեդրոնի Գալե իչին է (բերդի ներքև), որը կեդրոնական թաղ մըն է քաղաքին։ Այստեղ հայերը հույներե փոխանցված աղոթատեղի մը կունենան, որը 1680 թ. հրո ճարակ կըլլա, սակայն թաղեցիները չեն վհատիր և երկար աշխատելե հետո կհաջողի ֆերման մը ձեռք ձգել և կկառուցանեն նոր աղոթատեղի մը, որը 1794 թ. կօծվի։ Այս եկեղեցին ունեցած է արձանագրություն։

Այս Ս. Թեոդորոս (կամ Թորոս) եկեղեցվո կանանց բաժնի կողմը շինված է նաև Ս. Երրորդություն փոքր եկեղեցին, որը 1844 թ. նորոգված է Մհի. Պողոս Տեր-Հակոբյանե և որու համար գրված է հետևյալ արձանագրությունը. «Նորոգութիւն ս. Երրորդութիւն Եկեղեցիին եղեւ յԱմի Տն. 1844 յոգոստ 13, Առաջնորդութեամբ տն. Սարգսի Արքեպիս. ի արդեամբ սարաֆ Տեր Յակոբեան մհի. Պողոս աղայի. վսն հոգւոյ հանգուցցեալ ծնողաց իւրոց Տէր Յակոբա քհնյի եւ Մհի Թուրֆանտաի եւ եղբորն սարաֆ Կարապետ աղայի հանգուցելոց ի Տեր»։

Այս եկեղեցվո շրջաբակի մեջ գտնված է Ադրիանապոլսո Հայոց առաջնորդարանը և Արշակունյաց և Հռիփսիմյաց վարժարանները, որոնք բոլորը հրկիզվեցան 1905 մեծ հրդեհի ժամանակ։

Հայերով բնակված երրորդ թաղամասը եղած է Աթ փազար (ձիերու պազար)։ Հայ գաղթականները հոս ալ առաջին անգամ կկառուցանեն մատուռ մը, որը անբավարար սեպելով, կշինեն եկեղեցի մը Ս. Կարապետ անվան։ Այս քարաշեն եկեղեցին կօծվի 1867 թ.։ Նույն աղոթատեղի բակին մեջ թաղեցի հայեր ունեցած են Թորգոմյան երկսեռ վարժարանը։

Հայերու քաղաքի չորրորդ բնակատեղին եղած է Գարաաղաճ թաղը, որը կգտնվեր Կ. Պոլսեն դեպի Եվրոպա տանող շոսեկառքի գծի վրա. այստեղ 1919 թ. ապրած են մոտավորապես 450 հայեր։ 1909 թ. հոս ալ կառուցված է Ս. Լուսավորիչ եկեղեցին, իսկ 1895 թվականեն գոյություն ունեցած է Լուսավորիչյան հայկական երկսեռ վարժարանը։

Հինեն ի վեր հայ գաղութներու մեջ աղոթատեղիներու կողքին պանդուխտ հայը ստեղծած է իր վարժարանը կամ ինչպես անցյալին կկոչվեին՝ դպրատունը, ուր հին ժամանակներուն կղերականներ աշակերտներուն կսորվեցնեին գրաբար և կրոնական գիտելիքներ։ Ինչպես վերև հիշեցինք, Ադրիանապոլսո մայր վարժարանը կգտնվեր Գալե իչի թաղամասի մեջ իր երկու բաժիններով՝ աղջկանց Հռիփսիմյաց և տղայոց Արշակունյաց։ Այս վարժարանի հիմնադրության թվական մեզի անծանոթ կմնա, սակայն այստեղ ծառայած է 1770 թվականներուն Ղափանեցի Պետրոս վրդ., որը «թէ ռուսահայս եւ թէ ի թրքահայս, մանավանդ Անդրիանապոլիս եւ յԱրմաշ նշանաւոր անուն ձգած է»6. կրնանք հետևցրնել, թե գոնե այս թվականին գոյություն ունեցած է դպրատուն մը։ Այս վարժարաններու կողքին 1898 թ. առաջին անգամ Ադրիանապոլսո մեջ մանկապարտեզ ստեղծված է արդիական ըմբռնումներով։ Ըստ սահմանափակ տվյալներու 1903 թ. ուսուցչական կազմը եղած է 13 մնայուն և 2 այցելու ուսուցիչ 310 երկսեռ աշակերտներով։ Աթ փազարի թաղամասի Թորգոմյան վարժարանը նույն թվականին ունեցած է 2 մնայուն և 1 այցելու ուսուցիչ 89 աշակերտներով, իսկ Գաբաաղաճի Լուսավորիչյան վարժարանը 2 մնայուն ուսուցիչներ և 62 աշակերտ։

Զանազան ժամանակներ Ադրիանապոլսի մեջ գոյություն ունեցած են նաև անհատական ձեռնարկություններ։ 1885-ին Արամ Սվաճյան և իր երեք քույրերը ստեղծած են Սվաճյան մասնավոր վարժարան։ Նույնպես 1890—95 «Օգնասեր» ընկերության վարժարանը։ Այս վարժարանի հիմնադիրը եղած է Ռուբեն Փանոսյան։

Ադրիանապոլսո հայությունը իր մեջեն սակավաթիվ մանկավարժներ տված է։ Անոնք ընդհանրապես մեծ մասով դուրսեն բերված են հայախոս կեդրոններե։ Ասոնց մեջ հայտնի դեմքմըն է Պողոս պատվելի, որը պաշտոնավարած է 1856—58 թվականներուն ու հետո Կ. Պոլսո Ներսես Վարժապետյան պատրիարքը կըլլա։ Ռեթեոս Պերպերյան, ապագա հայտնի պոլսահայ ուսուցչապետը և հիմնադիր համբավավոր Պերպերյան վարժարանին, կովկասահայ Սպանգարյանց ընտանիքը 1890—92 տնօրեն, Արսեն Կիտուր տնօրեն, Սարգիս Սրենց տնօրեն են։

Երբ խոսք կըլլա ազգային մշակութային գործունեության մասին, պետք է հիշենք, թե Ադրիանապոլսո հայությունը, ենթակա եղած է մեկ կողմե Պոլսո հայկական մտավոր հոսանքներուն և մյուս կողմե Վենետիկի Մխիթարյաններու ազդեցության և այդ պատճառով թրքահայ

6 Տե՛ս Վահան վ. Տեր-Մինասյան. Անգիր դպրություն և Առակք. Կ. Պոլիս, 1893, էջ 18։

վերածնունդի անմաս չէ մնացած։ Դեռ 1860 թվականներուն Ազգային Սահմանադրությունը կոնվեր մեծ շուրջով երգվելով «Արիք Հայկազունքը», որ ավելի ուշ Համիտյան օրերուն պիտի երգվեր կրկին, բայց գաղտնի։ Շատ կանուխեն տոնված է նաև Վարդանանց տոնը։

1877—78 ռուս-թրքական պատերազմի շրջաններուն Պոլսեն հայ դերասաններ ՖասուլյանՀյան, Ռշտունի, Ջաւիրաստ, տիկին Հրաչյա և ավելի ուշ Մնակյան իրենց խումբերով կայցելին քաղաքը։ Այս շրջանին է, որ նշանավոր աղրիանապոլսեցի Հակոբ Պարոնյան դերասան Ռշտունիի հետ ընկերովի կպատրաստեն «Ատամնարույժն արևելյան» դավեշտը։

Հանրային հասարակական կյանքը մասնավորապես կծաղկի 1908 Հուրիեթե հետո, երբ կրացվի ավելի ադատ գործունեության դաշտ։ Կհիմնադրվին դանադան տեսակի մշակութային միություններ։ Այսպես, Գալե Իջի թաղամասի մեջ առաջին անգամ կստեղծվի «Եղբայրասիրական ակումբ»։ Անոր կհետևի «Հայկական կլյուպ» տարեցներու ժամադրավայր։ Կստեղծվի Ուսումնասիրաց ընթերցարան, որը կնվիրվի պատանիներու զարգացման գործին։ Այս ընթերցարանը իր թատերասեր խումբով նույն շրջանին կներկայացնեն «Լրտեսին գոհը» հեղափոխական շունչով բիես մը։ Եղբայրասիրաց ակումբ իր ներկայացումները կրնե թրքերեն լեղվավ, բացառություն ըլլալով «Քաջն Վարդանի» ներկայացումը։ Այս թաղի մեջ գոյություն ունեցած է նաև օրիորդաց և տիկնաց միություն, որու անդամուհիները ձեռագործ, կենցաղավարություն և խոհանոցի արհեստ կդասավանդեն։ 1913-ին կհիմնվի բարեգործականի մասնաճյուղը 74 անդամներով, իսկ աքսորե հետո «Վերածնունդ» դրասերներու միությունը։

Աթ Փազար թաղամասը, ուր բնակված են ավելի միջակ դասակարգի հայեր, 1908 թ. հետո ունեցած է իր միությունները, որոնց առաջին է «Արմենյան» դրասերներու միությունը իր դրադարանով և երդչախումբով, Տիկնաց կրթասիրաց միությունը։ Ասոնցմե առաջինը 1908—1914 թթ. կարճատև շրջանին ներկայացրած է բազմաթիվ բիեսներ, որոնց կարգին հիշենք «Արցունքի հովիտը», «Արապո», «Վանա Հայդուկները», «Անիի ավերակները», «Վարդանանց», «Պատվի համար», «Մարվող ճրագներ», «Սև հոգեր», «Պաղտասար աղբար», «Չարշըլը Արթին աղա», «Ատամնաբույժն արևելյան», «Երանոս աղբար», «Երից Քաջաց», «Վեցուկես պորտի ժառանգը», «Ակամա բժիշկ» և այլն։ Այս շրջանին այստեղեն անցած է կովկասահայ Սանթուրճյան-Առաքելյան թատերախումբը, որը մեծ օժանդակություն կգտնե Արմենյան խումբի մոտ։

Գարաաղաճ թաղամասի մեջ 1909 թ. կ՚իմնըվի Դրասիրաց ընկերություն, որը գլխավորաբար կգբաղի գրադարանով և իր մարմնամարզական բաժինով։ Հիշատակի արժանի է այստեղ թատերասերներու կողմանե «Օթելլոյի» և «Քորատոս» Վահրամ Փափազյանի գլխավոր դերակատարությամբ։ Ավելի հետո կազմված է Զավարյան միությունը, որը հետո միացած է Դրասիրացի հետ։ 1913-ին ստեղծված է տիկնաց միություն մը, որուն գլխավոր նպատակը եղած է տեղվույն Լուսավորիչյան վարժարանը օժտել մանկապարտեզի սրահով մը։ Կարճ ժամանակի մը համար գոյություն ունեցած է նաև «Բուլղարահայ ազգային միությունը»։

1856 թ. սկսյալ գոյություն ունեցած է Ազգատախնամի ընկերությունը, որը ամենահին է իր տեսակին մեջ Թրքահայոց մոտ։ Ընկերությունը ունեցած է 50 ավելի կալվածներ բարերարներու կողմե կտակված, որոնց եկամուտներով կարոտյալ հայ սղգաբնակչության անխտիր բաշխած է շաբաթական ոռճիկներ, սննդեղեն, վառելանյութ, իսկ հիվանդներու ապահոված է բժիշկական խնամք և այլն։

Աղրիանապոլսո հայությունը նույնպես նշանավոր դեմքեր տված է մեր ժողովուրդին։ Ասոնցմե հիշենք Կարապետ Վ. Անդրիանացի, աշակերտ հայ տպագրության վաստակավորներեն Երևանցի Ոսկան Վարդապետի և անոր օգնական մահեն հետո 1674։ Իր գործունեությունը եղած է գլխավորաբար Ամսթերդամի, Լիվորնոյի և Մարսիլիայի մեջ։ Տոքթ. Հովսեփ Պեյրան եղած է բժիշկապետ Ադգ. հիվանդանոցին, գրած է ֆրանսերեն հատոր մը՝ «Լա թիրքի մրտիգալ», որու համար ընտրված է առաջին հայ անդամը ֆրանսական բժիշկական ակադեմիային, արժանացած Պատվո լեկիոնին։ Հակոբ Պարոնյան հայ գրականության ամենաարժանավոր և ժողովրդական դեմքերեն մին է։

Աղրիանապոլսո հայերը իրենց զբաղումներով, մտայնությամբ ու ապրելակերպով կըպատկանին մանր քաղքենիության դասուն։ Ըստ իրենց զբաղումներուն դանոնք կարելի է դասավորել. ա) ադատ ասպարեզի հետևողներու՝ բըժիշկ, դեղագործ, փաստաբան, բ) օսմանյան պետական պաշտոնյաներ, գ) օտար հաստատություններու մեջ ծառայողներ, դ) առևտրականներ, ե) արհեստավորներ և պանդուխտ հայեր, որոնք շուկաներու մեջ պահապանություն և սրճեփություն կրնեին, իսկ ոմանք ալ մաքսատան մեջ բեռնակիր։ Աղրիանապոլսո մեջ տեղական բարքերու բերումով հայուհին չէ աշխատած, հայ կինը և օրիորդները տան պահա-

պաններ եղած են և անոնք շատ քիչ անգամ շուկա կելլեին, բայց երբեք առանձին։ Գաղութին մեջ շատ հին ատեններե իվեր թրքախոսությունը կտիրեր։ Վարժարաններու մեջ սորված հայերենը քիչ անգամներ կգործածվեր, շուկայի կամ տուներու մեջ կամ հավաքույթներու նույն էր պարագան։ 1908 «Հուրիեթե» հետո, հետզհետե այս սովորությունը տեղի տվավ, երբ ծնողները սկսան ավելի ջանադիր ըլլալ հայերեն լեզուն խոսելու։

Ադրիանապոլսո հայությունը XIX և XX դարերուն իրար հաջորդող մեծ դեպքերու ականատես և ապրումներ ունեցած է։

Ռուսական շրջան (ռուս տվվիրի), այսպես կհիշե ադրիանապոլսեցին 1877—1878 ռուս-թրքական պատերազմի շրջանը, երբ հաղթական բանակները ռուսներու մուտք գործեցին, որու հաջորդեց Սան Ստեֆանոյի պատմական դաշնագիրը, որուն հայանպաստ 16-րդ հոդվածը համեստ քայլ մըն էր Հայկական հարցի գծով։ Այս շրջանը ոչ միայն ազատություն ու մտավոր զարթնումի, այլև նաև ավելի բարեկեցիկ կյանքի մը շրջան եղավ։

Համիտյան շրջանը նույնպես իր հետքերը թողուց Ադրիանապոլսո մեջ, ուր հայերն ալ զգացին բռնակալին հայահալած քաղաքականությունը։ Նույն շրջանին պատահեցավ քաղաքի մեծ հրդեհը, որը մոխիրի վերածեց $^1/_3$ մասը կազմող հայ, հույն և հրեա կեդրոնական թաղերը և փճացան մոտավորապես 1800 բնակարաններ և հանրային հաստատություններ, որոնցմե շուրջ 250 հայերու սեփականություն, ազգապատկան կալվածներ, Ս. Թորոս եկեղեցին և բակի երկու վարժարանները և առաջնորդարանը։

Հաջորդող քաղաքական դեպքերը բերին 1908-ի «Հուրիեթը» (ազատություն, հավասարություն և եղբայրություն), որու շրջանին հայությունն ազատ շունչ մը քաշեց։

1912-ի Բալքանյան պատերազմ և բուլղար քաջարի բանակի մուտքը, նոր հույսեր բերավ հայոց, սակայն ժամանակավոր էր, երբ շատ շուտով կրկին օսմանցիները վերադարձան, իսկ քիչ հետո 1913 թ. աշնան ադրիանապոլսեցին ևս պիտի ճաշակեր աքսորի ճամփաներ։ Փրկության միակ ափը եղբայրական Բուլղարիան էր այնքան մոտիկ ու հակառակ որ Թուրքիո հետ կնքած էր զինակցություն, եղավ այդքան բարյացակամ հայերուս հանդեպ և բուլղարական Հյուպատոսարանը, որ գտնված է հայոց թաղի մեջ, մի քանի օրերու ընթացքին բավական թիվով հայերու հնարավորություն տվեց ապաստան գտնել այստեղ շնորհիվ հյուպատոս Կուրքո Սերաֆիմովի և իր ազնվափայլ տիկնոջ։ Բավական հայեր վերջին պահուն հաջողած են անցնիլ կամ մնալ Գարաաղաճ թաղամասը և այսպես փրկվիլ (այս շրջանին Գարաաղաճը Բուլղարիո կպատկաներ)։

1918-ի հոկտեմբեր 30-ին Սունտրոսի զինադադարը ներում կշնորհեր տարագրյալներուն, որոնք սկսան դառնալ իրենց ծննդավայրը։

1920-ին հունական բանակը կհասներ մինչև Ադրիանապոլիս և հայությունը հավատաց, թե տևական ապահովության շրջան հասած էր։ Կարճ եղավ անոր ուրախությունը, որովհետև 1922-ի աշնան տեսավ Անատոլուի հայության խուճապը ու խեղճությունը, որոնք Բուլղարիա ապաստան կփնտրեին, բայց ամիս մը հետո նույն ճակատագիրը իրենց ալ պիտի սահմանվեր, որովհետև թուրք և հույն զինադադարի հետևանքով, վերջինները պետք էին պարպել արևելյան Թրակիան և դայն հանձնեն թուրքերու։ Ադրիանապոլսո հայության մեկ մասը կանցներ Հունաստան և կհաստատվեր Նեա, Օրիսթիա, Տիմոտիեքա, Տետե-Աղաճ, Կյումուրճինա (այժմ Գոմոթինի), Քսանթի և Սելանիկ քաղաքները, իսկ մյուս մասը անցավ Բուլղարիա և հաստատվեցավ Փլովտիվ, Սոֆիա, քիչ թվով Սլիվեն, Խասկովո, Քըրճալի, Ռուսե, Բուրգազ և այլ քաղաքներ։

Ազգային սեփականություն ներկայացնող իրերե ոմանք ղեկավար իշխանությանց կարգադրությամբ կփոխադրվին Փլովտիվ, մաս մըն ալ Քսանթի։ Այս գույքերե մաս մը կմնան Ադրիանապոլիս տեղվույս 120 տարեց մնացած հայերու պետքերու համար։

Տեղեկություններու համաձայն կառավարությունը գրաված է և պետական պետքերու համար կգործածե ազգապատկան կալվածները, Ս. Կարապետի եկեղեցին փլած է, առաջնորդարանը խաղարանի վերածված, իսկ Ս. Թորոս եկեղեցին սինեմայի։ Հայոց լքյալ կալվածները ծախված են տեղացիներուն, փոխարժեքը ոչ տարվան վճարումի պայմանով։

Ահա այսպես վերջ գտավ Ադրիանապոլսո նոր գաղութի 3 դարյա և ավելի հարուստ պատմությունը, թողելով փայլուն հիշատակներ անցյալին։

Վ. Օ. ՉԵՐՉԻՅԱՆ (Պլովդիվ)